ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4Ն» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 05.04.2024թ.
ժամը 16:00
ավարտ՝ 18. 04.2024թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Աննա Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Լուսինե Զաքարյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Մարտիկ Ստեփանյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Աստղիկ Խաչատրյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Մանե Մալխասյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀմ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ ԸՆԹացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ:
2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայերտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:
5. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Տվյալներ՝ Ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման վերաբերյալ:
7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Չափաբաժինների համարները		*Չափաբաժնի անվանումը*
համարները	*գնման գինը*	
1	5 400 000	Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 65+383 հատվածում գտնվող ուղեանցի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**
2	3 600 000	S-2-15,/S-2-13/ (Գեղանիստ) – Գետափնյա – Ղուկասավան – Դարակերտ (S-2-3) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+400 հատվածում Հրազդան գետի վրա գտնվող կամրջի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**
3	5 000 000	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Բաղրամյան էստակադայի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին՝ **05.04.2024թ., ժամը 16:00**:

2.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 5-ն է:

2.3 Ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N/N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Աճառյան 54բ, 375040	00813453	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com Հեռ. +374 10 627110
2	«Արցախճան» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Աճառյան 1-ին նրբանցք, 24	00915384	hovona@gmail.com Հեռ. +374 95 11 14 62
3	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	ՀՀ ՇՄ Գյումրի Եպիսկոպոս Սմբատյան 4	05550895	archproject.llc@yahoo.com Հեռ. +374 98 955155
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8	08417251	info@haldi.am Հեռ. +374 91 430416
5	«ՄԱԼԿ » ՍՊԸ	ՀՀ ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1	05549897	malkgroup@yahoo.com Հեռ. +374 43 522581 +374 31 238888

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին:

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ.

- **«Արք. Պրոեկտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում հրավերով պահանջվող լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիրը (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթի՝ ակտի,արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները):
- **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները, մասնավորապես՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ

- **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ**-ի հայտով առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններում մրցույթի ձևը լրացված է «հրատապ բաց մրցույթ», որը չի համապատասխանում հրավերին:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և առաջարկել մասնակիցներին 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

18.04.2024 թվականին, ժամը 09:30–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

4. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայերտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

4.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

5.1 «Գնումների մասին» օրենքի և Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին 1: Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 65+383 հատվածում գտնվող ուղեանցի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5*
1	**«ՄԱԼԿ» ՍՊԸ**	**2 400 000**	**480 000**	**2 880 000**
2	«Արցախճան» ՍՊԸ	2 655 000	531 000	3 186 000

3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	4 200 000	840 000	5 040 000
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	4 275 000	855 000	5 130 000
5	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	4 350 000	0	4 350 000

Չափաբաժին 2: S-2-15,/S-2-13/ (Գեղանիստ) – Գետափնյա – Ղուկասավան –Դարակերտ (S-2-3) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+400 հատվածում Հրազդան գետի վրա գտնվող կամրջի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Արցախճան» ՍՊԸ**	**1 800 000**	**360 000**	**2 160 000**
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	2 850 000	570 000	3 420 000
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 900 000	580 000	3 480 000

Չափաբաժին 3: ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Բաղրամյան էստակադայի հիմնանորոգման աշխատանքների **նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Արցախճան» ՍՊԸ**	**2 750 000**	**550 000**	**3 300 000**
2	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	3 800 000	0	3 800 000
3	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	3 950 000	790 000	4 740 000
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	4 000 000	800 000	4 800 000

5.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

6. Տվյալներ՝ Ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման վերաբերյալ

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

- 1-ին չափաբաժնի մասով՝ **«ՄԱԼԿ» ՍՊԸ-ին**
- 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ **«Արցախճան» ՍՊԸ-ին**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Ընթացակարգի ընտրված մասնակիցների ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Ա. Ավագյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Լ. Զաքարյան**	.....
	Մ. Ստեփանյան	.....
	Ա. Խաչատրյան	.....
	Մ. Մալխասյան	.....
Քարտուղար՝	**Զ. Հայրապետյան**	.....